

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՔՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Յոյն Սինոդի արգելք հայ փահանայ չեղած տեղը
հայերի հոգեւոր պահանջները կատարելու մասին

Ռուսեւրիայում հայ եկեղեցի և հայ քահանայ չլինելու պատճառով հայ զինւորները զուրկ են մնում հոգևոր մխիթարութիւնից: Մեր պատրիարքարանը դիմել էր Կ. Պօլսոյ յոյն պատրիարքարանին խնդրելով թոյլ տալ յոյն քահանաներին հարկաւոր դէպքում հաղորդել հայ զինւորներին և կատարել հոգևոր արարողութիւնները, իսկ յոյն պատրիարքարանի որոշումն քացասական է եղել:

Այս առիթով, ինչպէս գրում է «Բիւզանդիոնը» (ապրիլ 13). յունաց պատրիարքը ասել է մեր պատրիարքական փոխանորդին. «Սինոդը, ինչ որ ալ ըլլար իր անդամներուն անհատական կարծիքը, ընդհանուր կերպով տարբեր եզրակացութեան մը չէր կրնար գալ, որովհետեւ եկեղեցական միութիւն չկայ հայ եկեղեցւոյ հետ, և եթէ պաշտօնապէս տարբեր որոշում մը տալ հարկ ըլլայ, պէտք էր օրթոդոքս միւս եկեղեցեաց և պատրիարքութեանց կարծիքն ալ ստանալ»:

Այս պատասխանից յետոյ աւելորդ էր մեր փոխանորդի հարցնելը, թէ յոյն եկեղեցին ինչպէս է ընդունում մեր եկեղեցին, և յոյն պատրիարքի ասելը, «թէ ուղղափառ կրնդունի»:

Մեր եկեղեցու ուղղափառութիւնը մենք չպէտք է մուրանք ուրիշ եկեղեցիներից, և այդ մուրացածոյ շնորհը չպէտք է հիմք ծառայեցնենք ուրիշ եկեղեցիների հետ հաղորդակցութիւն պահպանելու համար:

Մեր եկեղեցին իւր հաղարաւոր տարիներից հետէ ինքնուրոյն գոյութեամբ Քրիստոսի ընդհանրական եկեղե-

ցու մի կարևոր մասն է, և իբրև ինքնուրոյն եկեղեցի իւր իսկական շահերն ու քաղաքականութիւնը պէտք է ունենայ, և այդ շահու տեսակէտից պէտք է յարաբերութիւն պահի ուրիշ եկեղեցիների հետ Տաճկաստանում՝ միայն կառավարութեան հետ յարաբերութեան խնդիրներում:

Ձախակաւն այցելութիւններ պատրիարքաւաններէ միջեւ

Ձատիկի տօնի առթիւ մեր պատրիարքական Սրբազան տեղապահը փոխադարձ այցելութիւն է տուել բուլղարների էկզարխին և այցելել է յունաց պատրիարքին, սիրալիր ընդունելութիւն է գտել Յունաց Սրբազան պատրիարքը խօսել է «կալուածական, եկեղեցական և այլ խնդիրների նկատմամբ, սրօնց մասին երկու պատրիարքարաններում միջև դադափտրի նայնութիւն կտիրէ և փափագ յայտնեց միասին աշխատելու»:—

Բուլղարների էկզարխը խոստացել է իւր ձեռքից եկածն անել ի նպաստ Բուլղարիայում հայ առաջնորդութիւն հաստատելուն և տաճկահայատականների ուսուցչութիւնը յաջողեցնելուն:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Կ. Պօլսոյ հայ կաթոլիկների ազգ. երես. ժողովի նգնաժամը

Հայ կաթոլիկների պատրիարք Թերզեանը, որ այնքան մեծ յոյսերով կաշուեց իւր արգի պաշտօնին՝ չի արդարացնում իւր վերայ դրուած յոյսերը, «Երևանդիոն»ում (ապրել 15) կարդում ենք, որ Սրբազան Թերզեանը պահանջած է եղել, որ Վրուծուի Աղգային ժողով ըստւածը,» և իմանալով որ դեռ չէ լուծուած պարսաւում է իւր փոխանորդ Ճամճեան եպիսկոպոսին, և հրաժայում է անմիջապէս լուծել ժողովը և չնախագահել ժողովներին, Թերզեանի նամակի հետ յանձնուել է Ճամճեանին պապական արտա-